

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ռ Ո Ւ Ս Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի .

Ս. Սինոդի օբեր-պրոկուրորի զեկուցումը: Ս. Սինոդի օբեր-պրոկուրոր Սարկերը Բարձրագոյն անունով ներկայացնելով տարեկան հաշուէտուութիւն պրափօսլաւ եկեղեցու վարչութեան մասին՝ ի միջի այլոց, ասում է. «Խնչպէս ցոյց են տալիս թեմակալ առաջնորդների զեկուցումները՝ այդ հաշուէտուութեան տարուայ մէջ պրափօսլաւ հոգևորականութիւնը գտնուել է իւր կոչման բարձրութեան վրայ: Աստուածապաշտութեան և հօտը պահպանելու նկատմամբ հոգևորականութիւնը անկեղծ և եռանդուն կերպով իւր պարտքն է կատարել»: Այդ հաշուէտուութիւնից երևում է՝ որ վաճառքերը ունեն 764,516 դեսեատին հող, որից 172,174 դեսեատին վարելահող, 83,513 դեսեատին մարգագետին, 304,056 դեսեատին անտառ, և 3,548 դես. այգիներ: Ծխական-եկեղեցական դպրոցների և գրագիտութիւն տարածող դպրոցների թիւն է 37,590, իսկ սովորողների թիւն այդ դպրոցներում 2,010,191:

Ռուսաստանի բարձրագոյն դպրոցները: Լուսաւորութեան նախարարութեան հրատարակած տեղեկութիւններից երևում է, որ ներկայումս Ռուսաստանում գոյութիւն ունի 108 բարձրագոյն դպրոց, որոնք գտնւում են 22 քաղաքներում: Պետրոգրադում այդ բարձրագոյն դպրոցներից գտնւում են 40, Մոսկուայում 20, Կիււնում 8, Վարշաւայում և Քարկովում 5-ական, Կազանում 4, Օդեսայում, Տոմսկում և Իւրիկում—3-ական, Եկատերինոսլաւում և Նովոչերկասկում—2-ական, Վլադիվաստոկում, Վորոնեժում, Նոր Ալէքսանդրիայում, Նիժնիում, Ռիգայում, Սամարայում, Թիֆլիսում և Եարոսլաւում—1-ական: Ուսանողների ընդհանուր թիւն է 112,774, պրոֆեսսորներինը և դասատուներինը 6,939: Բարձրագոյն դպրոցներից 80-ը արական են, 28 կանանց: Ուսանողների թիւն է 81,652, իսկ ուսանողուհիներինը— 31,122:

Սլաւոնական Աստուածաւելչի գիտական հրատարակութեան Զան-
ձնաժողովի նիստը: Պետրոգրադի Հոգևոր Ճեմարանի վերատեսչի
ընտելարանում կայացել է Աստուածաշնչի գիտական հրատարա-
կութեան Զանձնաժողովի նիստը: Ակադեմիկ Պերետց զեկուցել է
ս. Գրքի թարգմանութիւնների մասին հրէական լեզուից արեւ-
մտեան ոտսերէնի X\I դարի վիլէնսկի ձեռագրի համաձայն: Այդ
թարգմանութեան մէջ զեկուցանողը նկատել է X\I-րդ դարի բա-
րենորոգչական շարժման երևոյթներից մէկը, որ ճոխ կերպով
կապուած է նոյն ժամանակի բոլոր լեզուներով եւրոպայում եղած
Աստուածաշնչի նոր թարգմանութեանց հետ: Այդ թարգմանու-
թեան երեւան եկած տեղը, համաձայն թարգմանական լեզուի,
եղել է հիւսիսային Մալորուսիան, և ոչ թէ արեւմտեան—ուե-
սական նահանգները, որի հետ նշանաւոր կերպով համապա-
տասխան է դալիս նաև Կիւսի մասին եղած պատմական ցուցումն:
Մի քանի դրքերի թարգմանական լեզուի մէջ նկատուում է եկե-
ղեցական—սլաւոնական լեզու: Այդ առթիւ զեկուցանողը բացա-
տրում է, որ թարգմանիչն ենթարկուել է այն ժամանակ գոյու-
թիւն ունեցող Աստուածաշնչի եկեղեցական—սլաւոնական թարգ-
մանութեան: Այդ զեկուցման քննադատութեան մասնակցել են
յայտնի պրոֆեսսորներ Ի. Եվսէեւ, և Ի Տրոյիցկի, Պրոֆեսսոր
Ի. Եվսէեւը, ի նկատի առնելով Վիլինեան ձեռագրի թարգմանու-
թիւնների լեզուի նմանութիւնները հրէականացրած թարգմանու-
թիւնների լեզուին, նմանապէս և այդ թարգմանութեան մէջ
նկատուած հրէական հայեացքների առանձնայատկութիւններ, եզ-
րակացնում է, որ այդ թարգմանութիւնը վերաբերւում է X\I-րդ
դարի հրէական հերետիկոսների գործունէութեան:

Եկեղեցական մովի սոլառման խնդիրը Խուսաստանում: Ռու-
սաստանի պրովօսլաւ եկեղեցիներում սպառուող մովի մեծագոյն
մասը ստացւում է արտասահմանից: Մովի վաճառման մենավա-
ճառութիւնը մեծ մասամբ գտնուել է գերմանացի վաճառական-
ների ձեռքում: Ռուսաց ս. Սինօդը պատերազմից առաջ ծրագրում
էր մովի աւետուրը կատարել ոչ թէ գերմանացիների ձեռքով,
այլ անմիջապէս յարաբերութիւն հաստատելով Լօնդոնի, Կնտվեր-
պէնի, Համբուրգի և այլ քաղաքների շուկաների հետ: Պատերազմը
խանգարեց այդ ծրագիրը կանոնաւոր կերպով իրագործել, բայց
և այնպէս ս. Սինօդի կարգադրութեամբ ներկայումս ստացւում է
մեծ քանակութեամբ մով Լօնդոնից, Մարսելից, Լիսաբոնից և այլ
քաղաքներից: Որոշուած է գնել մինչև 200 հազար փութ մով:
Արդէն ստացուած է 10 հազար փութ: Ամբողջ Ռուսաստանի հա-

մար փութադրուում է կարիք 600 հազար փութ մումի: 200 հազար փութը կարելի է ձեռք բերել Ռուսաստանում, 209 հազար փութ էլ այրուած մումերից, իսկ մնացած 200 հազար փութն էլ արտասահմանից:

Անհրաժեշտութիւն է նկատուում ամեն կերպ աշխատել զարգացնել մեղուապահութիւնը, որպէսզի բոլոր մումը կարելի լինի ստանալ Ռուսաստանից, որ որակով աւելի լաւ է, քան արտասահմանի մումը:

1900—1910 թ. Ռուսաստանում մի միլիոն 200 հազար փեթակ աւելացել է, իսկ բոլոր փեթակների թիւը Ռուսաստանում հաշոււմ են 6 միլիոնից աւելի: Որպէսզի հնարաւոր լինի ամբողջ մումը Ռուսաստանից ստանալ անհրաժեշտ է կրկնապատկել փեթակների թիւը և ունենալ 12 միլիոն առնուազն:

Փեթակների տարածման և առհասարակ այդ խիստ օգտակար անտեսութեան — մեղուաբուծութեան կարող են զարգ տալ գիւղերում եկեղեցիները, դպրոցները իրենց գործունեայ քահանաներով և ուսուցիչներով:

— Աւելի քան ժամանակն է, որ մեր Հայոց թեմերում ևս մումի արդիւնաբերութեան խնդիրն դրական լուծումն ստանայ, գոնէ իւրաքանչիւր թեմ պէտք է ունենայ իւր եկեղեցական մումի գործարանը, որը կըմատակարարի թեմին մաքուր և էժանազին մում: Մեր գիւղական քահանաների և ուսուցիչների ճշմարիտ պարտականութիւնն է զարկ տալ մեղուաբուծութեան, որը միևնոյն ժամանակ տեղական եկեղեցու կամ դպրոցի համար մուտքի լաւ աղբիւր կը ծառայի:

Սուրբ Երկրի ապագայ վիճակը: Եւրոպական պատերազմի շնորհիւ հրապարակ եկած ամենալուրջ խնդիրներից մէկն էլ է Պաղեստինի — Ս. Երկրի ապագայ վիճակը: Այս մասին թերթերը նուիրեցին մի քանի յօդուածներ, թէ ի՞նչ վիճակ պէտք է ունենայ Սուրբ Երկիրը ապագայում: Սկզբում կարծիք էին յայտնում՝ որ Պաղեստինը ազատուելով՝ բոլորովին մնայ անկախ և չէզոք երկիր, յետոյ էլ առաջարկեցին, որ մնայ Անգլիայի հովանաւորութեան ներքոյ: Պետութիւններից էլ ոմանք խորհրդաւոր կերպով լուծութիւն են պահպանում և առ այժմ լսում այդ մասին կարծիքներ: Սուրբ Երկրի չէզոքութեան մասին յօդուածներ լոյս տեսան «Виржев. Вѣдомости» թերթում, որից յետոյ յունական մամուլում ևս լոյս տեսան յօդուածներ այդ առթիւ յանուն սկզբունքի — «audiat altera pars». Յոյներն այդ առթիւ աղմուկ են բար-

ձրացնում, որ իրենք դարերի ընթացքում մեծ ծառայութիւն են մատուցել և Վաղեստինի Քրիստոսի սուրբ գերեզմանը և առհասարակ Պաղեստինի սուրբ տեղերը յափշտակութիւններից և հալածանքներից մահմեդականների, լատինների եւ հայերի կողմից:*)

Յոյն թերթերը զանազան ենթադրութիւններ անելով Սուրբ Երկրի ապագայ վիճակի մասին՝ շեշտում են այն հանգամանքը, որ երբ լուծուի Պաղեստինի ապագայ վիճակը՝ անշուշտ յոյներն ևս պէտք է ունենան իրաւունք այդ Երկրի նկատմամբ:

Կ Ա Թ Ո Ւ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի.

Բենեդիկտ XV-րդ պապը եւ Բելգիան: Բենեդիկտ XV-ի վերաբերմունքը դէպի թշնամու կողմից կոսլիտ յարձակման ենթարկուած և բացառիկ տանջանքներ կրած կաթոլիկ Բելգիան սկզբից դաշնակից երկրներում առանձին ուշադրութեան խնդիր է եղել: Թէ Բելգիայի և թէ Ֆրանսիայի կաթոլիկները գտնում են, որ Հռոմին անձնուէր կաթոլիկ երկրի կրած անարդար ճնշումների դէմ շատ թեթեւ կերպով է բողոքում կաթոլիկ աշխարհի Պետը: Հասարակական կարծիքն անհամբեր կերպով սպասում էր, որ Պապը ուժեղ կերպով կը բողոքի ի պաշտպանութիւն Բելգիայի ժողովրդի, նորա տաճարները կործանելու, ժողովրդին և հոգևորականներին ոտքի տակ տալու դէմ, և մանաւանդ սպասում էին՝ որ Վատիկանը եռանդուն կերպով կը բողոքի Կարդինալ Մերսիէին ազատութիւնից զրկելու համար: Բայց այդ յոյսերը չարդարացան: Քաղաքականութեամբ զբաղուող Պապը բաւականացաւ միայն այդ բոլորի դիմաց ցաւ յայտնելով պատահած դէպքերի առթիւ, չհամարելով անհրաժեշտութիւն բողոքել սոսկալի անգթութիւնների դէմ: Այդ տպաւորութիւնն ենք ստանում Պապի ճառից, որ ուղղել է Բելգիական դեսպանին, երբ վերջինս պէտք է հեռանար Հռոմից: Իւր

*) Զափազանց աչքի ընկնող անարդար աչլ եւ կրօնական նեղ անհամբերող ոգի են ցոյց տալիս յոյն Զերթերը, լատիններին եւ հայերին միեւնոյն դժի վրայ դնելով մահմեդականների հետ, ասելով, որ իրրեւ թէ լատիններն ու հայերը յափշտակում են ու հալածում Ս. Երկրի սրբութիւնները: Հայերն ու լատինները նոյնքան իրաւունք ունին Պաղեստինի Սուրբ տեղերի վրայ, որքան եւ յոյները: Իսկ ի՞նչ խօսք, որ մինչեւ այժմ աւթաբեր է եղել քրիստոնեայ աշխարհի համար, որ Ս. Երկիրը գտնուել է մահմեդական պետութեան իշխանութեան ներքոյ:

ճառի մէջ Պապը ցաւ յայտնելով Բելգիացիների հետ պատահած դժբախտութիւնների առթիւ՝ վերջում յայտնում է՝ թէ «Զպէտք է յուսահատուել, փոթորկից յետոյ Բելգիացիների համար վերցտին կը փայլի տիեզերքի արեգակը»:

Իտալիայում կաթոլիկ մամուլին նպաստող եւ տարածող քննադատներ.— Կաթոլիկ եկեղեցին վաղուց է զգացել տպագրական խօսքի ահագին նշանակութիւնը և նպաստել նորա տարածման: Որտեղ հնարաւոր է՝ աշխատել են ամենալայն կերպով օգտուել իրենց նպատակների համար այդ ամենաուժեղ միջոցից ազդեցութիւն գործելով հասարակական կարծիքի վրայ: Պիոս X Պապը, որ առանձին հաւատ չէր ընծայում նոր ձևերին և կաթոլիկ եկեղեցու գործ դրած միջոցներին՝ սակայն մեծ նշանակութիւն էր տալիս մամուլի միջոցով ունեցած ազդեցութեան և խօսքի կարևոր ոյժին, որի համար և աշխատում էր՝ որ կաթոլիկ եկեղեցին իւր ներգործութիւնը ունենայ մամուլի շնորհիւ: Գերմանիայում և Ֆրանսիայում կան առանձին ընկերութիւններ, որոնք նպատակ ունեն պահպանելու Կաթոլիկ մամուլը և նպաստելու նորա տարածման: Այժմ նման ընկերութիւններ հաստատուում են Իտալիայում: Վերջին ժամանակներս այդ ուղղութեամբ գոյութիւն ունի հին կաթոլիկական լրագիր: Սկզբում այդ լրագրերի հրատարակութեան գործն ընթանում էր յաջող, բայց յետոյ, երբ կաթոլիկ եկեղեցին, նկատելով այդ լրագրերի աչքի ընկնող անկախ դիրքը, կամենում էր իւր ազդեցութեան ենթարկել, այդ լրագրերի բաժանորդագրութեան գործը ընկաւ և կաթոլիկ առաքելութեան վտանգ էր սպառնում մնալ առանց հարկաւոր պաշտպանութեան: Շուտով Կարդինալ Մաֆֆի նախաձեռնութեամբ կազմուեց «Բարի մամուլի Ազգային Ընկերութիւն», որն և 25 մարտի Բենեդիկտ XV-ի քաջալերութեան արժանացաւ: Նոր ընկերութիւնը նպատակ է դրել, ի միջի այլոց, նաև կռուել բոլոր հակալրօնական ուղղութիւն ունեցող հրատարակութեանց դէմ բարի մամուլի միջոցով, այսինքն տարածելով կաթոլիկ լրագիրը և ամսագիրը: Այդ նոր ընկերութեան անդամագրուել են շատերը և Պապը առանձին ոյժ է տալիս այդ օգտակար ընկերութեան:

ԱՆՊԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Հօնդոնի եպիսկոպոսի այցր զօրհերին պատերազմի դաշտում։
 Հօնդոնի եպիսկոպոսը գնացել է պատերազմի դաշտը յատուկ
 նպատակով։ Անգլիական եկեղեցու ողջոյնները յայտնելու զօրքին։
 Քենտրբերի և Իօրսկի արքեպիսկոպոսներն էլ իրենց յանձնարա-
 րումներն են արել նամակով։ Առաջինը խնդրել է յայտնել պա-
 տերազմի դաշտում Բրիտանական Կայսրութեան պատիւը և գործի
 ճշմարտութիւնը պաշտպանող անգլիացիներին, որ Անգլիայում ոչ
 մի ժամ չեն մոռանում նրանց իրենց աղօթքներում և մտքերում
 և խնդրում են Աստուծուն նրանց կեանքի ապահով վիճակի մա-
 սին, որ իրենց վրայ դրուած ծանր պարտքը քաջութեամբ կա-
 րողանան կատարել։ Երկրորդը յանձնարարել է հաղորդել առանձ-
 նապէս սպաներին և զինուորներին հիւսիսային գնդերի, որ հնա-
 դարեան մօր—Հիւսիսային Անգլիայի եկեղեցու տղաները և աղ-
 ջրկերքը աղօթում են նրանց համար, հպարտանում են նրանցով և
 հաւատում են նրանց և պէտք է նրանց մասին հոգան մինչև վերջը։
 Հօնդոնի եպիսկոպոսը եղել է անգլիական զօրքի համարեա բոլոր
 մասերում, որ տարածուած են Ֆրանսիայում, և ամեն տեղ տեսել է
 իւր ճառը, ուղղելով ոչ միայն անգլիացիներին, այլ և բոլոր դա-
 ւանութեան զինուորներին, իւրաքանչիւր օր կատարել է ժամա-
 սացութիւն, և մինչև անգամ մի քանի հարիւր զինուորների վրայ
 կատարել կօնֆիրմացիայի ծէսը։ Անգլիական հրամանատար սեր
 Ֆրէնչը իւր զեկուցման մէջ յայտնում է զօրքի վրայ թողած Հօն-
 դոնի եպիսկոպոսի բարերար ազդեցութեան ցմասին։

Բ. Վ. Ա.